

Կենտրոն թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագիծ

Որպես Երևանի Կենտրոն համայնքի կանոնակարգման և կարգավորման տարածահատակագծային հիմնական տարրեր և բարձր քաղաքաշինական արժեքի տարածքներ, նախագծում առանձնացվում են՝

Քաղաքի կենտրոնի միջուկը, որն ընդգրկում է Հանրապետության հրապարակին և Օպերային թատրոնին հարող արդեն կազմավորված թաղամասերն ու համաքաղաքային գործառույթների առավելագույն կենտրոնացման գոտի է...

Քաղաքի կենտրոնական կորիզը, որն ընդգրկում է հիմնականում Օղակաձև զբոսայգու սահմաններում գտնվող տարածքները, որտեղ արդեն կազմավորվել է ամենաարժեքավոր և հազվադեպ համաքաղաքային նշանակության օբյեկտների ճարտարապետահատակագծային միասնությունը:

Կենտրոնի միջնամասային գոտին, որն ընդգրկում է Կենտրոն համայնքի հատակագծային, տարածական և ճարտարապետական առումով արդեն կազմավորված տարածքները:

Այս՝ Երևանի կերպարը ձևավորող, արդեն կազմավորված գոտիներին վերապահվում է տարածքների և համալիրների կանոնակարգման, վերակառուցման, վերանորոգման և վերականգնման ռեժիմ՝ հուշարձան-շենքերի և արդեն ձևավորված համալիրների հատուկ հաշվառումով:

Երևանի կենտրոնի տարածահատակագծային և հորինվածքային հիմնական գերիշխող տարրերն են մնում մայրաքաղաքի կերպարը ձևավորող Հանրապետության հրապարակն ու Օպերայի թատրոնի հանգույցը, որոնք իրենց չափերով, ճարտարապետությամբ և դիրքով կազմավորում են հիմնական հորինվածքային առանցքների՝ Գլխավոր և Հյուսիսային պողոտաների ուղղվածությունն ու ճարտարապետատարածական կերպարը:

Կենտրոն համայնքի առանձին մեծ թաղամասերը, օրինակ՝ Այգեստանը, Կոնդը, Սարի թաղը, Կիլիկիան բավականին խայտաբղետ հատակագծային և ճարտարապետական կազմավորումներ են, և դրանց համալիր, միաժամանակյա վերակառուցումը բարդ գիտագործնական հիմնախնդիր է: Այդ պատճառով՝ այս տիպի տարածքների պարագայում վերապահվում է աստիճանական վերակառուցման ռեժիմ՝ գոտիավորման, կառուցապատման և ծավալատարածական հատուկ չափորոշիչների սահմանմամբ:

Գլխավոր պողոտայում՝ այժմյան <<Սիլ պլազայից>> մինչև Կողբացու փողոց ընկած տարածքում, նախատեսվում է միջանկյալ գոտի, որտեղ հնարավորություն է

տրվում հավաքել, վերականգնել և քաղաքաշինական արդի պահանջներին համապատասխան ներկայացնել հին Երևանի ճարտարապետության և քաղաքային կենցաղի առանձին տարրերը:

Կենտրոնի համաքաղաքային գործառույթների տարածքային տարածման և զարգացման համար համայնքի սահմաններում առանձնացվում են համաքաղաքային նոր գործառույթների և հեռանկարային հատակագծային կանոնակարգման և հնարավոր զարգացման պահեստային տարածքներ: Հնարավոր չափով կանոնակարգվում և լրացվում են համաքաղաքային նշանակության կանաչ տարածքները:

Հյուսիս-հարավ առանցքը հյուսիսից կամբողջացնի Կասկադի նոր համալիրը: Հարավում՝ կենտրոնի կորիզին կից, Տիգրան Մեծի պողոտայի շրջակայքում գտնվող արտադրական և պահեստային տարածքների կառուցապատումը նախատեսվում է վերափոխել խառը կառուցապատման՝ հարավային ուղղությամբ ձգվող <<Մոլի>> կազմակերպման միջոցով՝ այստեղ ապահովելով Կենտրոն համայնքի, հատկապես՝ հասարակական և հասարակաարտադրական գործառույթների գերակշիռ աճ: Այսպիսով՝ կընդգծվի կենտրոնական գործառույթների զարգացման հարավային հատակագծային ուղղությունը:

Կենտրոնական գործառույթների զարգացման մյուս կարևորագույն՝ հատակագծային ուղղությունը հարավ-արևմտյան առանցքն է, որը զարգանում է դեպի Երևանյան լիճն ու Դալմայի այգիներում կազմակերպվող մեծ այգեպուրակային տարածքները: Նախագծվող տարածքի հատակագծային կառուցվածքը կանխորոշել են նրա պատմական արժեքը, Հրազդան գետի կիրճի գեղատեսիլ բնական տեղանքը, Երևանյան լիճը և անմիջական կապը քաղաքի կենտրոնի հետ:

Դեռևս քաղաքի 1971թ. գլխավոր հատակագծում և քաղաքի կենտրոնի 1982թ. մանրամասն հատակագծման նախագծում, Հրազդան գետի կիրճը դիտարկվել է որպես համաքաղաքային հանգստի գոտի, իսկ դիտարկվող տարածքը՝ Երևանյան գոտու զբոսաշրջության գլխավոր կենտրոն՝ վերակառուցվող պատմական տարածքների ընդգրկմամբ: Տվյալ գոտու առանցքն է քաղաքի երկու գլխավոր հորինվածքային առանցքներից կազմված հատվածը. հարավ-արևմուտք - կենտրոնական հրապարակ ՎՆ հյուսիս-արևելք, իսկ 'Պասկևիչի բլուրը' ժամանակին նախատեսվել էր ռուս-հայկական հուշահամալիր կառուցելու համար, որը պետք է ընդգրկվեր դեպի կենտրոն ձգված հետիոտն գոտու, զբոսայգիների և հրապարակների կառուցվածքի մեջ, և հարավ-արևմուտք-կենտրոն առանցքի քաղաքաշինական հիմնատարրն էր, ինչը նախանշված էր դեռ թամանյանական

գլխավոր հատակագծում (Կասկադ-Յյուսիսային պողոտա- Յանրապետության հրապարակ- Մյասնիկյանի հրապարակ-Պասկևիչի բլուր):

Երևանի 2005թ. լիավոր հատակագիծը հիմնականում պահպանել է վերոհիշյալ հատակագծային լուծումների ժառանգականությունը, սակայն դրանց իրացումը նոր պայմաններում դարձել է ավելի հրատապ: Լիավոր հատակագծով նախատեսված՝ Լենինգրադյան փողոց ՎՆ Ծովակալ Իսակովի պողոտա - Արշակունյաց պողոտա արագընթաց կենտրոնական տրանսպորտային օղակի արևմտյան մասով անցնելն ուժեղացնում է տարածքի քաղաքաշինական արժեքը:

Ծովակալ Իսակովի պողոտայում նախատեսվող տրանսպորտային նոր հանգույցը, փաստորեն, կդառնա քաղաքի հանդիսավոր մուտք՝ «Չվարթսոց» օդանավակայանից դեպի քաղաքի կենտրոնական մաս, իսկ «Երևանի բերդ» համալիրը կվերածվի Երևանի այցեքարտի:

Գոտիավորման նախագծով նախատեսվող հիմնական հատակագծային և գործառական լուծումներն են՝

- Միջազգային մշակութային կենտրոնի ստեղծումը՝ բազմաթիվ հանդիսատեսային դահլիճներով, թանգարանային և ցուցասրահային տարածքներով,
- Միջազգային ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների գրասենյակների տարածքների կազմակերպումը, ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ-երկրներին և այլ միջազգային կազմակերպություններին առանձին հողակտորների հատկացմամբ՝ մշակութաազգագրական կենտրոններ ստեղծելու համար,
- «Երևան սիթի»՝ համապատասխան ենթակառուցվածքներով հագեցված միջազգային գործարարական բազմագործառութային կենտրոնի ստեղծումը (բանկեր, առևտրի կենտրոններ, միջազգային ներկայացուցչություններ, հյուրանոցներ և այլն),
- Ազգերի մշակութային միաբանության տարածք՝ Էներգիայի կուտակման և պահպանման գոտի և փառատոների դաշտ (Սարդարի (Սարդուրի) այգին),
- Չվարճանքի և հանգստի համաքաղաքային գոտի՝ կանաչ գոտիների և բնական տեղանքի պահպանմամբ, ընդլայնմամբ և լրացուցիչ ջրային մակերեսների ստեղծմամբ,
- Առանձին բնակելի թաղամասեր դիվանագետների համար,

- Սոցիալական ենթակառուցվածքներ. միջազգային ցուցանիշներին համապատասխանող բնակելի տներ, դպրոցներ, մանկապարտեզներ, մարզահրապարակներ և մարզադահլիճներ,
- Պատմական գոտիների հատակագծային միասնական կապերի ստեղծումը, պահպանվող և արդիականացվող օբյեկտների հատակագծային կառուցվածքի մեջ ընդգրկումը:

Կենտրոն թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագծի հիմնական ցուցանիշները.

Տարածքը՝ 1359.3 հա.

Բնակելի ֆոնդը (հազ. մ2 ընդհ. մակ.) գոյություն ունեցող՝ 3422.9, նախատեսվող՝ 4794.5.

Բնակելի կառուցապատման միջին հարկայնությունը. գոյություն ունեցող՝ 4.1 հարկ, նախատեսվող՝ 5.3 հարկ

Բնակչության թիվը. առկա՝ 129.7 հազ. մարդ, նախատեսվող՝ 146.1 հազ. մարդ

Բնակչության բնակելի շր. խտությունը. առկա՝ 213 մարդ/հա, նախատեսվող՝ 272 մարդ/ հա:

Կանաչապատված տարածքները՝ առկա՝ 322.1 հա, նախատեսվող՝ 486.9 հա:

Մայրուղային ճանապարհափողոցային ցանցի գծերի երկարությունը՝ առկա՝ 44 կմ, նախատեսվող՝ 62.5 կմ:

Կենտրոն թաղային համայնքի գոտիավորման նախագիծը, համաձայն ՀՀ կառավարության 14.05.2001թ. հ. 408 որոշմամբ ընդունված կարգի, հաստատվել է Երևանի քաղաքապետի 28.11.2007թ. հ. 5074-Ա որոշմամբ:

ԱՏՈՐԳԵՏՆՆԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

